ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 փետրվարի 2017թ. N13*

# 1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՂԱԼՈՒՄՅԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքի ղեկավար Վ.Ղալումյանի տարեկան հաշվետվությունը համայնքի 2016թ համայնքի բյուջեի կատարման մասին և ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին" 16-րդ հոդվածի 3-րդ կետով

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Հաստատել համայնքի ղեկավար Վ.Ղալումյանի տարեկան հաշվետվությունը համայնքի 2016թ բյուջեի կատարման մասին /կցվում է հաշվետվությունը/:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՂԱԼՈՒՄՅԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի 2016թ բյուջեն կատարվել է 99.4%, այդ թվում սեփական եկամուտների մասով 96.8%:

Հարկային եկամուտների կատարողականը կազմվել է 97.7%, այդ թվում գույքահարկը կատարվել է 98.7%, որից իրավաբանական անձանց վճարումների հաշվին 114.4%, ֆիզիկական անձանց վճարումների հաշվին 96.7%:

Ընդամենը տուրքերը կատարվել են 87.4%, այդ թվում պետական տուրքերի գծով 84.4%, տեղական տուրքերի գծով 89.7%:

Ոչ հարկային եկամուտները կատարվել են 101.3%:

Ֆոնդային բյուջեն կատարվել է 98.7%: Համայնքի բյուջեի ծախսային մասը կատարվել է 99.1%, այդ թվում կրթության բնագավառում նախատեսված ծախսումները կատարվել են 100%, մշակույթ և սպորտի բնագավառը 99.9%, աղբահանություն և սանմաքրման ծախսերը՝ 98.4%, ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները՝ 99.7%:

Ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվության համար գանձվող տուրքը 2016թ կազմվել է 1306.2 հազար դրամ կամ 85.7%: Մարդատար տաքսիների թույլտվության համար գանձվող տուրքը կազմվել է 150 հազար դրամ կամ 100%:

Գովազդների մասով նախատեսված 3060.0 հազար դրամի փոխարեն հավաքագրվել է 3855.7 հազար դրամ կամ 126.0%:

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի թույլտվության համար գանձվել է 249.6 հազար դրամ կամ 99,8%, վառելիքաքսայուղերի, խտացված գազերի վաճառքի թույլտվության համար գանձվել է 1074.5 դրամ կամ 99.5%:

Ղեկավարվելով համայնքի զարգացման ծրագրի ռազմավարությամբ, այն է՝ համայնքը դարձնել զբոսաշրջության կենտրոն, 2016 թ-ին շարունակվել են իրականացվել Իջևան քաղաքի բարեկարգման ու գրավիչ միջավայրի ստեղծմանը նպաստող բազմաթիվ ծրագրեր: Ամբողջովին ասֆալտապատվել է Բլբուլյան փողոցից դեպի 3-րդ դպրոց տանող ճանապարհը, Իջևանի վարժարանի հարակից տարածքը իր մայթով, դատարանից դեպի 4-րդ դպրոց տանող ճանապարհը, ասֆալտապատվել է Մետաղագործների փողոցը /1700քմ/, սալիկապատվել է նույն փողոցի մայթերը, բետոնապատման միջոցով վերանորոգվել են Պռոշյան և Սայաթ-Նովա փողոցները: Ուժգին կարկտահարության և հեղեղի հետևանքով վնասվել էին քաղաքի գրեթե բոլոր փողոցները: Այն վերականգնելու համար քաղաքապետարանն աշխատել էր շուրջօրյա ռեժիմով: Վնասն այնքան մեծ էր, որ անհրաժեշտություն առաջացավ քաղաքապետարանի տեխնիկական պարկը համալրել նոր տեխնիկայով: Ձեռք բերվեց հատուկ հարթեցնող տեխնիկա (գրյեդեր) և բեռնատար մեքենա, որոնց օգնությամբ շատ արագ վերականգնվեցին քաղաքի բոլոր բանուկ փողոցները: Երևանյան, Պռոշյան, Թավրիզյան, Ղարագյոզյան, Տերյան, Սարիբեկ Օհանյան, Նար-Դոս, Մետաղագործների փողոցներում իրականացվեցին խճապատման, սելավատարների մաքրման և փոսալցման աշխատանքներ:

Կարկտահարության հետևանքով վնասվել էր նաև Երևանյան, Մեհրաբյան փողոցների նոր վերականգնված լուսավորության ցանցը: Այն ևս արագ հիմնանորոգվել է: Տարվա ընթացքում լուսավորության նոր ցանց է տեղադրվել նաև Երիտասարդական, Թևոսյան, Ղարագյոզյան, Թավրիզյան, Ազատամարտիկների, Այգեստան փողոցներում, ինչպես նաև Անկախության, Երիտասարդական, Սեքարեցի Սաքոյի բազմաբնակարան շենքերի բակերում: Վերանորոգվել են ուժգին քամուց վնասված թվով տաս բազմաբնակարան շենքերի տանիքները:

Ինչպես նախորդ տարիներին, 2016թ-ին ևս շարունակվել են կանաչապատման աշխատանքները: Երևանյան, Ուսանողական, Անկախության փողոցներում տարվա ընթացքում տնկվել են 5000 վարդի թուփ, ծաղիկների 10000 սածիլ: Ազատամարտիկների

հրապարակում հիմնվել է ուռենու պուրակ, իսկ Երևանյան և հիվանդանոցի մայրուղուն
հարող լանջում և ուսանողական փողոցում՝ համալսարանի դիմաց տնկվել են բարդիներ և
ուռենիներ: Բարեկարգվել է Հայրենական մեծ պատերազմի հուշահամալիրի տարածքը՝
հիմնովին նորացվել և հարթեցվել է սիզամարգի հողաշերտը, կառուցվել է լուսավորության
ցանց, տեղադրվել են նոր ջահեր, տնկվել են տարատեսակ թփեր և ծաղիկներ, վերանորոգվել
են հուշահամալիր տանող աստիճանները:
Քաղաքի տարբեր մասերում տեղադրվել է ևս 3 ցայտաղբյուր:
Բավականին արդյունավետ է ընթանում աղբահանությանն ուղղված մեծածավալ ծրագիրը,
որի շրջանակներում այսօր քաղաքում տեղադրվել են պլաստիկ շշերի համար
նախատեսված հատուկ աղբամաններ: Քաղաքի բնակիչները դրական արձագանքելով այդ
նախաձեռնությանը, պլաստիկը տարանջատում են կենցաղային աղբից: Տարվա ընթացքում
քաղաքում տեղադրվել է ընդհանուր առմամբ 160 նոր աղբաման
Քաղաքի 21 բազմաբնակարան շենքերում գործում են վերելակներ, որոնց անխափան
աշխատանքն ապահովելու նպատակով քաղաքապետարանը մշտապես իրականացնում է
սպասարկման աշխատանքներ: Ծավալուն սպասարկում է իրականացվում նաև քաղաքի
լուսավորության ցանցի և կանաչապատման գոտիների պահպանման համար:
Հայրենական մեծ պատերազմի մասնակից, մեր հայրենակից, գնդապետ Գրիգոր Բլբուլյանի
հիշատակի համար նախատեսված հուշաքարը քաղաքապետարանի ջանքերով հղկվել,
վերջնական տեսքի է բերվել և տեղադրվում է նրա անունը կրող փողոցում գտնվող
ցայտաղբյուրի մոտ:
Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս քաղաքի երթևեկությունը չի տուժել ձյան
հետևանքով: Քաղաքապետարանի կոմունալ ծառայությունը ժամանակին իրականացրել է
աղցանման և մաքրման համապատասխան աշխատանքներ: Տարվա ընթացքում գծանշվել
են փողոցները, կատարվել լուսացույցների սպասարկում:
Իջևանի քաղաքապետարանի տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժնի
կողմից 2016թ կատարվել են`

- աճուրդային ձևով հողամասերի օտարում՝ 45 հատ,
- մրցութային ձևով հողամասերի տրամադրում՝ 38 հատ,
- տնատիրությունների և օբյեկտների հասցեավորումներ՝-251 հատ,
- բնակելի կառուցապատման հողամասերի և շինությունների հիմքերի վերականգնում ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների" օրենքին համաձայն՝ 122 հատ,
- վերահասցեավորում՝ 52 հատ,
- հողամասերի և ինքնակամ կառույցների համայնքային սեփականության ճանաչում՝ 17 հատ,
- հողամասերի սահմանների ճշտում՝ 13 հատ,
- հողամասերի ենթավարձակալության համաձայնեցում՝ 10 հատ,
- հողամասերի ընդլայնում՝ 5 հատ,
- անհատական բնակելի տների 300.0քմ –ից ավել հողամասերի ուղղակի վաճառք՝ 1հատ,
- ինքնակամ հասարակական կառույցների օտարում՝ 12 հատ,
- նախապատվության իրավունքով ուղղակի վաճառք՝ 3 հատ,
- հողամասերի անհատույց օտարում՝ 2 հատ,
- կառուցապատման իրավունքով հողամասի տրամադրման՝ 27 հատ,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրում՝ 36 հատ,
- շինարարության թույլտվությունների տրամադրում՝ 34 հատ,
- շինարարության շահագործման փաստագրման ակտերի տրամադրում՝ 28 հատ
- հողահատկացման հիմքերի վերականգնում՝ 23 հատ

- գործառնական նշանակության փոխում՝ 100 հատ
- իբնակամ կառուցված շինությունների իրավական կարգավիճակի մասին 8 հատ
- անհատույց օտարում 8 հատ

1. 2016 թվականին ներքին աուդիտի բաժնի կողմից քաղաքապետարանի աշխատակազմի բաժիններում և ենթակա կազմակերպություններում իրականացվել է 11 աուդիտ, որի արդյունքում կազմվել է համապատասխան հաշվետվություններ
2. Աուդիտի արդյունքում հայտնաբերված խախտումները իրազեկվել են իրավասու պաշտոնատար անձանց և տրվել են համաօտասխան ցուցումներ այն վերացնելու և ապագայում նույնը չկրկնելու կապակցությամբ
3. Ներքին աուդիտի կողմից համայնքապետասրանում և ենթակայության կազմակերպություններում պարբերաբար իրականացվում է սեմինար խորհրդատվություններ՝ կապված օրենքների և նրանցում կատարված փոփոխությունների վերաբերյալ
4. Կազմակերպվել են ներքին աուդիտի կոմիտեի նիստեր

Մեծ ձեռքբերումներ ունեցանք նաև մշակույթի և սպորտի բնագավառներում: Երաժշտական դպրոցների և Արվեստի դպրոցի սաները, ժողգործիքների համույթը հաջողությամբ մասնակցել են հանրապետությունում կազմակերպված մրցույթ-փառատոներին, արժանացել առաջինից երրորդ պատվավոր մրցանակների: Միջնակարգ երաժշտական դպրոցը կրթության և գիտության նախարարի և Տավուշի մարզպետի կողմից արժանացել է պատվոգրի, ինչպես նաև Համահայկական հիմնադրամի կողմից դրամական պարգևի: Մարզադպրոցի սաները միջազգային մրցաշարերում և հանրապետական առաջնություններում բազկամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, փետրագնդակ սպորտաձևերում զբաղեցրել են պատվավոր մրցանակային տեղեր: Կարևորելով մանկապարտեզների բարեկարգումը, այստեղ պարբերաբար իրականացվում են աշխատանքներ, ինչի արդյունքում թիվ 8 մանկապարտեզը ունի լոկալ ջեռուցման համակարգ, առաջիկայում կփոխվեն նաև մանկապարտեզի լուսամուտները, թիվ 5 մանկապարտեզում իրականացվել է միջանցքի վերանորոգման աշխատանքներ: Մանկապարտեզները համալրվել են ժամանակակից խոհանոցային գույքով: Նախատեսվում է գալիք տարում ամբողջովին նորացնել մանկապարտեզների գույքը: Իջևանի պատկերասրահում և թանգարանում իրականացվել են բազմաբնույթ ցուցահանդեսներ՝ նվիրված հանրապետության տոներին և հիշարժան օրերին: Հատկանշական է վերջերս կազմակերպված 100 դուռ ցուցահանդեսը, որին հրավիրված էր և մասնակցում էր նաև սիրված երգիչ Հարութ Փամբուկչյանը: Քաղաքապետարանի մշտական ուշադրության կենտրոնում են համայնքի մտավորականները, զոհված ազատամարտիկների ընտանիքները, հայրենական մեծ պատերազմի և աշխատանքի վետերանները: 2017թ-ին նախատեսվում է տնամերձեր հատկացնել զոհված ազատամարտիկների ընտանիքներին: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի, քաղաքի դպրոցների տարրական դասարանների և մանկապարտեզների երեխաները ստացել է ամանորյա նվերներ:

Իջևան քաղաքի պատմություն ունենալու նպատակով, գրող-հրապարակախոս Ռուբեն Սիմոնյանին առաջարկվել է ձեռնամուխ լինել մեր քաղաքի պատմության գրքի ստեղծմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
ՈՐՈՇՈՒՄ
*28 փետրվարի 2017թ. N 14*

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ և ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անհրաժեշտ է քաղաքապետարանի հաստիքացուցակում կատարել համապատասխան փոփոխություն:
Հաշվի առնելով քննարկման արդյունքները
*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Համաձայն "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 3-րդ մասի համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանել 440000 դրամ, համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնային դրույքաչափը 355000 դրամ /հավելված 1/:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Հավելված 1

Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 28.02.2017թ. թիվ 14Ա որոշման

## ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2017թ

Աշխատակիցների թվաքանակը՝ 47

| ՀՀ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| | ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 440000 |
| | ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 355000 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 300000 |
| 4 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 150000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 5 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 330000 |
| | *Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում* | | |
| | *ՔԿԱԳ Իջևանի տարածքային բաժին* | | |
| 6 | Բաժնի պետ | 1 | 256600 |
| 7 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 133600 |
| | *Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ* | | |
| | *Ֆինանսական բաժին* | | |
| 8 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 9 | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 10 | Առաջատար մասնագետ | 2 | 124775 |
| 11 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 100680 |
| | *Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին* | | |
| 12 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 13 | Գլխավոր մասնագետ –ճարտարապետ | 1 | 158227 |
| 14 | Առաջատար մասնագետ | 2 | 124775 |
| 15 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 100680 |
| | *Աշխատակազմի մասնագետներ* | | |
| 16 | Գլխավոր մասնագետ | 4 | 158227 |
| 17 | Առաջատար մասնագետ | 3 | 124775 |
| 18 | 1-ին կարգի մասնագետ | 4 | 100680 |
| | *Առևտրի, տրանսպորտի, սպասարկումների և կապի բաժին* | | |
| 19 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 20 | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 21 | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| 22 | 2-րդ կարգի մասնագետ | 2 | 83358 |
| | *Կրթության, մշակույթի և սպորտի բաժին* | | |
| 23 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 24 | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| 25 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 100680 |
| 26 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 83358 |
| | *Ներքին աուդիտի բաժին* | | |
| 27 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 28 | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ | | |
| 29 | Քարտուղարուհի | 1 | 115000 |
| 30 | Խմբագիր | 1 | 92550 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 31 | Վարորդ | 1 | 255000 |
| 32 | Պարետ | 1 | 72751 |
| 33 | Էլեկտրիկ | 1 | 72751 |
| 34 | Ավտոբուսի վարորդ | 1 | 72751 |
| | Ընդամենը | 47 | 7590456 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 փետրվարի 2017թ. N 15*

# 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ Քաղաքաշինության նախարարության 27.01.2017թ N 06/11.2/274-17 գրությունը և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2 դրական եզրակացությունն, ու ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, ,,Քաղաքաշինության մասին,, ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող Արցախյան 120/1 հասցեի 0.48324հա մակերեսով հողամասի ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի (բնակավայրերի) գլխավոր հատակագծի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը համաձայն հավելվածի.

Հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը

| Հողամասի առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական գործառնական նշանակության | բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի գործառնական նշանակության |

2. Գլխավոր հատակագծի փոփոխությունն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների պահպանմամբ: Կատարել առկա շինությունների տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության գնահատում:

3. „Քաղաքաշինության մասին„ ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1720-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*28 փետրվարի 2017թ. N 16*

## 4. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Մայիսի 28-ի փողոցում 20.7քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0115-0045/ հողամասը կադաստրային քարտեզում արտացոլված են, որպես ֆիզիկական անձանց պատկանող բնակելի կառուցապատման հողամաս, սակայն որևէ անձի անվամբ հաշվառված չեն և դրանց նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք գրանցված չեն:
Ղեկավարվելով << ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*
1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Մայիսի 28-ի փողոցում 20.7քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0115-0045/ հողամասի նկատմամբ Իջևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
# ՈՐՈՇՈՒՄ
*28 փետրվարի 2017թ. N 17*

## 5. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

Ղեկավարվելով,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով՝ աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի.

| հհ | Նպատակը | Հասցե | Մակերեսը/քմ |
|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր օգտագործում | Սպանդարյան փ. | 19.8 |
| 2 | Ընդհանուր օգտագործում | Արցախյան փ. | 19.4 |
| 3 | Ընդհանուր օգտագործում | Արցախյան փ. | 17.4 |
| 4 | Ընդհանուր օգտագործում | Ղարագյոզյան փ. | 78.0 |
| 5 | Ընդհանուր օգտագործում | Անկախության փ. | 19.8 |
| 6 | Բնակելի կառուցապատում | Այգեստան փ. | 400.0 |
| 7 | Հասարակական կառուցապատում | Մայիսի 28-ի փ. | 20.7 |
| 8 | Հասարակական կառուցապատում | Աբովյան փ. 19 | 19.9 |
| 9 | Հասարակական կառուցապատում | Աբովյան փ. 21 | 24.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*28 փետրվարի 2017թ. N 18Ա*

## 6.ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համայնքի տարածքում գործող կրթության, մշակույթի և սպորտի բնագավառի համայնքային ենթակայության 10 հիմնարկների աշխատանքների կազմակերպումը բարելավելու, նրանց գործունեությունը վերահսկելու, երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը արդյունավետ կազմակերպելու, համայնքի զինապարտների և զինակոչիկների հետ տարվող աշխատանքը, զորակոչի և զորահավաքների կազմակերպումը, ինչպես նաև բնակչության քաղաքացիական պաշտպանության դրվածքը բարելավելու համար անհրաժեշտություն է առաջացել համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնում կատարել փոփոխություն՝ 2-րդ կարգի մասնագետի մեկ հաստիքը կրճատել և փոխարենը ավելացնել գլխավոր մասնագետի մեկ հաստիք, կրճատել աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի երկու հաստիքներ և ավելացնել աշխատակազմի գլխավոր մասնագետի երկու հաստիքներ:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 26-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1-2 հավելվածները:
2. Ուժը կորցրած ճանաչել Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 18 հունվարի 2017թ. «Իջևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 02 որոշումը քաղաքապետարանի մասով:
2. Իջևան համայնքի ղեկավարին՝ Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ կողմ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ կողմ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ կողմ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ կողմ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ կողմ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ կողմ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Հավելված 1

Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 28.02.2017թ թիվ 18Ա որոշման

# ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատակազմը կազմված է 6 բաժիններից՝

## Առանձնացված ստորաբաժանում

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Իջևանի տարածքային բաժին

## Կառուցվածքային ստորաբաժանումներ

2. Ֆինանսական բաժին
3. Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին
4. Առևտրի, տրանսպորտի, սպասարկումների և կապի բաժին
5. Ներքին աուդիտի բաժին
6. Կրթության, մշակույթի և սպորտի բաժին

Հավելված 2

Իջևանի քաղաքային համայնքի ավագանու 28.02.2017թ թիվ 18Ա որոշման

# ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2017թ

Աշխատակիցների թվաքանակը՝ 47

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| | ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 440000 |
| | ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 355000 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 300000 |
| 4 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 150000 |
| | ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| 5 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 330000 |
| | *Աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում* | | |
| | *ՔԿԱԳ Իջևանի տարածքային բաժին* | | |
| 6 | Բաժնի պետ | 1 | 256600 |
| 7 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 133600 |
| | *Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ* | | |
| | *Ֆինանսական բաժին* | | |
| 8 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 9 | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 10 | Առաջատար մասնագետ | 2 | 124775 |
| 11 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 100680 |
| | *Տարածքային զարգացման և քաղաքաշինության բաժին* | | |
| 12 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 13 | Գլխավոր մասնագետ -ճարտարապետ | 1 | 158227 |
| 14 | Առաջատար մասնագետ | 2 | 124775 |
| 15 | 1-ին կարգի մասնագետ | 1 | 100680 |
| | *Աշխատակազմի մասնագետներ* | | |
| 16 | Գլխավոր մասնագետ | 6 | 158227 |
| 17 | Առաջատար մասնագետ | 3 | 124775 |
| 18 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 100680 |
| | *Առևտրի, տրանսպորտի, սպասարկումների և կապի բաժին* | | |
| 19 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 20 | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 21 | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| 22 | 2-րդ կարգի մասնագետ | 2 | 83358 |
| | *Կրթության, մշակույթի և սպորտի բաժին* | | |
| 23 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 24 | Գլխավոր մասնագետ | 1 | 158227 |
| 25 | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| 26 | 1-ին կարգի մասնագետ | 2 | 100680 |
| | *Ներքին աուդիտի բաժին* | | |
| 27 | Բաժնի պետ | 1 | 280000 |
| 28 | Առաջատար մասնագետ | 1 | 124775 |
| | ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ | | |
| 29 | Քարտուղարուհի | 1 | 95000 |
| 30 | Խմբագիր | 1 | 92550 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 31 | Վարորդ | 1 | 255000 |
| 32 | Պարետ | 1 | 72751 |
| 33 | Էլեկտրիկ | 1 | 72751 |
| 34 | Ավտոբուսի վարորդ | 1 | 72751 |
| | Ընդամենը | 47 | 7780419 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## ՈՐՈՇՈՒՄ

*28 փետրվարի 2017թ. N 19*

Համայնքի 2017թ բյուջեի եռամսյականին համամասնությունների պահպանման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել 10850.0 հազ դրամ նախատեսված ծախսերի հոդվածային վերաբաշխումներ: Ելնելով վերոնշյալից և ղեկավարվելով ,,Բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. 2017թ ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել 10850.0 հազ դրամ նախատեսված ծախսերի վերաբաշխումներ, այդ թվում 04.05.01. բաժնի 5113 հոդվածից 10.000.0 հազ. դրամ կրճատել և հատկացնել 06.06.01 բաժնի 5113 հոդվածին, 2-րդ եռամսյակից 850.0 հազ. դրամ տեղափոխել 04.05.01 բաժնի 5134 հոդվածի 1-ին եռամսյակին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ